ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/268/2024

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 11 սեպտեմբերի 2024թ.

Կոռուպցիայի կանխարգելման Հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2024 թվականի սեպտեմբերի 11-ին քննելով Քաղաքաշինության կոմիտեի նախագահ Եղիազար Վահրամի Վարդանյանի կողմից հայտարարագրման ենթակա տվյալները «Պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրում ոչ ամբողջական ներկայացնելու փաստի առթիվ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը.

ՊԱՐԶԵՑ

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը ՝ «Նյուզ էյ էմ» կայքում 2024 թվականի հունիսի 1-ին հրապարակված ««Ժողովուրդ», ինչ ունեցվածք է

հայտարարագրել Քաղաքաշինության կոմիտեի նորանշանակ նախագահը» վերտառությամբ հրապարակման հիման վրա [1]իրականացրել է Եղիազար Վահրամի Վարդանյանի «Պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) ներկայացված տվյալների ստուգում:

1.2 Ստուգման արդյունքում պարզվել է, որ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային շտեմարանում առկա տվյալների համաձայն, Եղիազար Վահրամի Վարդանյանի կինը՝ Նարինե Ստեփանի Հակոբյանը, 2020 թվականի մայիսի 21-ից մինչև 2024 թվականի մարտի 22-ը հանդիսացել է «Մոդուլ» ՍՊԸ-ի 100%-ի բաժնետեր, իսկ 2020 թվականի մայիսի 21-ից՝ «Մոդուլ» ՍՊԸ-ի գործադիր մարմնի ղեկավար (տնօրեն), մինչդեռ Եղիազար Վահրամի Վարդանյանը Հայտարարագրի «Ե.1.1. Հայտարարատու պաշտոնատար անձի և (կամ) նրա ընտանիքի անդամների ներկայացվածությունն առևտրային կազմակերպություններում» և «Ե.1.2 Հայտարարատու պաշտոնատար անձի և (կամ) նրա ընտանիքի անդամների ներկայացվածությունն առևտրային կազմակերպությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժիններում նշվածի վերաբերյալ տվյալներ չի ներկայացրել:

1.3 Հանձնաժողովը 2024 թվականի օգոստոսի 7-ին Եղիազար Վահրամի Վարդանյանին է հասցեագրել թիվ 01/2427-2024 ծանուցումը Հայտարարագրում հայտնաբերված վերոշարադրյալ անհամապատասխանությունների վերաբերյալ՝ հրավիրելով նշված գրությունը ստանալուց հետո՝ 7-րդ օրը (ոչ աշխատանքային օր հանդիսանալու դեպքում հաջորդող աշխատանքային օրը), ժամը՝ 11:00-ին վերջինիս ներկայությամբ կազմելու վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն: Միաժամանակ, նույն գրությամբ Եղիազար Վահրամի Վարդանյանը հրավիրվել է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության 2024 թվականի սեպտեմբերի 11-ին, ժամը՝ 11:00-ին: Նշված գրությունը Եղիազար Վահրամի Վարդանյանի կողմից ստացվել է 2024 թվականի օգոստոսի 12-ին:

1.4 2024 թվականի օգոստոսի 19-ին Հանձնաժողով է ներկայացրել Եղիազար Վահրամի Վարդանյանի ներկայացուցիչ Փայլակ Կարապետյանը: Վերջինիս

[1] https://news.am/arm/news/826729.html

մասնակցությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 700/24 արձանագրությունը՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշով:

1.5 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացվել է Եղիազար Վահրամի Վարդանյանի ներկայացուցիչ Փայլակ Կարապետյանի մասնակցությամբ: Վերջինս Հանձնաժողովին ներկայացրեց դիրքորոշում և գրավոր նյութեր գործում քննարկվող փաստական հանգամանքների կապակցությամբ:

2. Վարույթի մասնակցի բացատրությունը.

Եղիազար Վահրամի Վարդանյանի ներկայացուցիչ Փայլակ Կարապետյանը գործի քննության ընթացքում ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է, որ Եղիազար Վահրամի Վարդանյանի կինը՝ Նարինե Ստեփանի Հակոբյանը իր հայտարարագրի համապատասխան բաժիններում ներկայացրել է «Մոդուլ» ՍՊ ընկերության վերաբերյալ իրեն առնչվող տվյալներ, իսկ Եղիազար Վահրամի Վարդանյանը տեղյակ չի եղել, որ նշված տվյալները պետք է հայտարարագրվեին թե՛ իր, թե՛ իր կնոջ հայտարարագրում:

Եղիազար Վահրամի Վարդանյանի ներկայացուցիչը հայտնեց, որ ներկայումս Նարինե Ստեփանի Հակոբյանը չի հանդիսանում «Մոդուլ» ՍՊ ընկերության բաժնետեր, այլ միայն հանդիսանում է նշված ընկերության գործադիր մարմնի ղեկավար՝ տնօրեն: Նշեց, որ Նարինե Ստեփանի Հակոբյանը «Մոդուլ» ՍՊ ընկերությունում իր ունեցած բաժնեմասն օտարել է դեռևս 2024 թվականի մարտի 19-ին, այսինքն՝ Եղիազար Վահրամի Վարդանյանի պաշտոնեական պարտականությունների ստանձնումից առաջ:

Ինչ վերաբերում է «Մոդուլ» ՍՊԸ-ում Նարինե Ստեփանի Հակոբյանի՝ տնօրեն հանդիսանալու վերաբերյալ տվյալին, ապա Եղիազար Վահրամի Վարդանյանի ներկայացուցիչը նշել է, որ Եղիազար Վահրամի Վարդանյանը Հայտարարագրում «Ա.2 Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» բաժնում՝ որպես իր կնոջ պաշտոն (աշխատանքային գործունեություն) լրացրել է «Մոդուլ» ՍՊԸ վերաբերյալ տվյալը: Ներկայացուցիչը նշել է նաև, որ իր հերթին Նարինե Ստեփանի Հակոբյանը պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ պաշտոնատար անձի

պաշտոնեական պարտականություններն ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի և եկամուտների հայտարարագրի «Գ.1.1 Հաշվետու ժամանակաշրջանի եկամուտներ» և «Գ.1.2 Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ» բաժիններում ներկայացրել է «Մոդուլ» ՍՊԸ-ի վերաբերյալ տվյալներ:

Ներկայացուցիչը գործի քննության ընթացքում ներկայացրել է 2024 թվականի մարտի 19-ի «Մոդուլ» ՍՊԸ միակ մասնակցի թիվ 01/24 որոշում, և 2024 թվականի մարտի 19-ին կազմված «Մոդուլ» ՍՊԸ բաժնեմասի նվիրատվության թիվ 01/24 պայմանագիր, որոնց համաձայն՝ Նարինե Ստեփանի Հակոբյանը «Մոդուլ» ՍՊԸ-ում իր ունեցած բաժնեմասը նվիրատվության կարգով օտարել է ՀՀ քաղաքացի Սամսոն Արազու Գասպարյանին:

3. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները.

Հանձնաժողովն, ուսումնասիրելով և վերլուծելով գործում առկա նյութերը, կատարելով գործի հանգամանքների համակողմանի քննություն, հաստատված է համարում հետևյալը.

3.1 ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ Եղիազար Վահրամի Վարդանյանը Հայտարարագրում՝ «Ե.1.2 Հայտարարատու պաշտոնատար անձի և (կամ) նրա ընտանիքի անդամների ներկայացվածությունն առևտրային կազմակերպությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժնում չի ներկայացրել «Մոդուլ» ՍՊԸ-ում կնոջ՝ Նարինե Ստեփանի Հակոբյանի, տնօրեն հանդիսանալու վերաբերյալ տվյալները:

3.2 Հայտարարագրում «Ա.2 Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» բաժնում Եղիազար Վահրամի Վարդանյանը որպես իր կնոջ պաշտոն (աշխատանքային գործունեություն) լրացրել է «Մոդուլ» ՍՊԸ վերաբերյալ տվյալը:

3.3 Եղիազար Վահրամի Վարդանյանի կինը՝ Նարինե Ստեփանի Հակոբյանը, պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի և եկամուտների

հայտարարագրի «Գ.1.1 Հաշվետու ժամանակաշրջանի եկամուտներ» բաժնում՝ որպես գործատու, ինչպես նաև «Գ.1.2 Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ» բաժնում ներկայացրել է «Մոդուլ» ՍՊԸ-ի վերաբերյալ տվյալներ:

3.4 Նարինե Ստեփանի Հակոբյանը 2024 թվականի մարտի 19-ին կազմված թիվ 01/24 նվիրատվության պայմանագրով «Մոդուլ» ՍՊԸ-ում իր բաժնեմասը նվիրատվության կարգով օտարել է ՀՀ քաղաքացի Սամսոն Արազու Գասպարյանին, որի վերաբերյալ գրանցումը Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում կատարվել է 2024 թվականի մարտի 22-ին:

3.5 Եղիազար Վահրամի Վարդանյանը Քաղաքաշինության կոմիտեի նախագահի պաշտոնը ստանձնել է 2024 թվականի մարտի 22-ին՝ ՀՀ Կառավարության 2024 թվականի մարտի 21-ի N 400-Ա որոշմամբ:

4. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը, հիմնավորումները և պատճառաբանությունը.

4.1 Եղիազար Վահրամի Վարդանյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայտարարագրի՝ «Ներկայացվածությունը առևտրային կազմակերպությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժնում նշվում են այն կազմակերպության անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն, որի կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում ներկայացված է հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, ինչպես նաև այդ կազմակերպությունում անձի կարգավիճակը:

4.3 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական

իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.4 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը (պաշտոնատար անձը) ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.5 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, *այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:*

4.6 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

4.7 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի ***282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է գործի վարույթը կարճելու մասին որոշում (----) բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:***

Հանձնաժողովը, համադրելով գործում առկա փաստական հանգամանքները, դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջների հետ, հաստատված է համարում, որ անզգուշությամբ կատարվել է խախտում, այն է՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ Եղիազար Վահրամի Վարդանյանի կողմից Հայտարարագրում՝ «Ե.1.2 Հայտարարատու պաշտոնատար անձի և (կամ) նրա ընտանիքի անդամների ներկայացվածությունն առևտրային կազմակերպությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժնում չի ներկայացրել «Մոդուլ» ՍՊԸ-ում կնոջ՝ Նարինե Ստեփանի Հակոբյանի, տնօրեն հանդիսանալու վերաբերյալ տվյալները, որով խախտել է Օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ

մասի պահանջները, որի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է այն կազմակերպության վերաբերյալ տվյալներ՝ անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն, որի կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում ներկայացված է հայտարարատու պաշտոնատար անձը **և (կամ) նրա ընտանիքի անդամները**, ինչպես նաև այդ կազմակերպությունում անձի կարգավիճակը:

Նշված արարքը հանդիսանում է վարչական զանցանք՝ հիմք ընդունելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին պարբերությամբ սահմանված իրավակարգավորումը (հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը լուծելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով» սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ: Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, թե արդյոք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Հանձնաժողովը նախորդիվ իր կողմից կայացված որոշումներով (օրինակ՝ թիվ ՎԻՎ/13/22) շահերի հայտարարագրման հետ կապված խախտումներով արարքը նվազ նշանակության է որակել, երբ հայտարարատու պաշտոնատար անձի կողմից *<u>իր ընտանիքի անդամի մասին հայտարարագրված տվյալի և այդպիսի տվյալ հետ փոխկապակցության մեջ գտնվող վերջինիս ընտանիքի անդամի կողմից իր հայտարարագրում ներկայացված տվյալով</u>* (առևտրային կազմակերպությունից ստացված եկամուտ) ըստ էության բացահայտված է որակվել պետական պաշտոն զբաղեցնող անձի ընտանիքի անդամի առնչությունը (որպես տնօրեն՝ առևտրային կազմակերպության կառավարման մարմնում ներկայացվածությունը) առևտրային կազմակերպությունում, որպիսի պայմաններում ուղենշվել է շահերի հայտարարագրման օրենսդրի կողմից կանխորոշված նպատակը՝ պաշտոնատար անձի ընտանիքի անդամի ներկայացվածությունը առևտրային կազմակերպությունների կառավարման մարմիններում բացահայտելու առումով:

Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն գործի փաստական հանգամանքները նույնական են վերոնշյալ փաստական հանգամանքների հետ: Ավելին, տվյալ դեպքում ոչ միայն հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամն է իր հայտարարագրում ներկայացրել «Մոդուլ» ՍՊԸ-ի վերաբերյալ տվյալներ («Գ.1.1 Հաշվետու ժամանակաշրջանի եկամուտներ» բաժնում՝ որպես գործատու, ինչպես նաև «Գ.1.2 Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ» բաժիններում), այլ նաև հենց ինքը՝ Եղիազար Վահրամի Վարդանյանը Հայտարարագրի մեկ այլ բաժնում՝ «Ա.2 Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» բաժնում որպես իր կնոջ պաշտոն (աշխատանքային գործունեություն) լրացրել է «Մոդուլ» ՍՊԸ վերաբերյալ տվյալը:

Վերոնշյալով պայմանավորված՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Եղիազար Վահրամի Վարդանյանի և վերջինիս կնոջ՝ Նարինե Ստեփանի Հակոբյանի կողմից իրենց հայտարարագրերում ներկայացված տվյալներով ապահովվում է պետական պաշտոն զբաղեցնող անձի իրական գույքային դրության վերաբերյալ հանրության տեղեկացվածությունը, որպիսի պայմաններում գործնականում չի խաթարվում հանրային հաշվետվողականությունը:

Ինչ վերաբերում է 2024 թվականի օգոստոսի 19-ին կազմված ՎԻՎ/700/24 արձանագրությամբ արձանագրված՝ Նարինե Ստեփանի Հակոբյանի՝ «Մոդուլ» ՍՊԸ-ում ունեցած բաժնեմասնակցությունը Եղիազար Վահրամի Վարդանյանի կողմից Հայտարարագրի «Ե.1.1. Հայտարարատու պաշտոնատար անձի և (կամ) նրա ընտանիքի անդամների ներկայացվածությունն առևտրային կազմակերպություններում» բաժնում հայտարարագրված չլինելուն, ապա վարույթի մասնակցի ներկայացուցչի կողմից ներկայացված ապացույցներով հաստատվել է, որ պաշտոնը ստանձնելու օրվա դրությամբ Նարինե Ստեփանի Հակոբյանի կողմից «Մոդուլ» ՍՊԸ-ում ունեցած իր բաժնեմասն արդեն իսկ օտարված է եղել այլ անձի, ինչից հետևում է, որ նշված տվյալը «Ե.1.1. Հայտարարատու պաշտոնատար անձի և (կամ) նրա ընտանիքի անդամների ներկայացվածությունն առևտրային կազմակերպություններում» բաժնում հայտարարագրման ենթակա տվյալ չի հանդիսանում:

Տվյալ պարագայում Հանձնաժողովն ընդգծում է նաև, որ սույն գործում առկա փաստական տվյալներով արդեն իսկ ապահովված է պետական պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների պահպանման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հնարավոր շահերի բախման իրավիճակում գործողություն կատարելու կամ որոշում ընդունելու դեպքերի բացահայտման իրավական հնարավորությունը:

Այս առումով Հանձանաժողովն արձանագրում է, որ խախտման որակական կողմը գնահատման է պետք ենթարկվել օրենքի ձևական և բովանադկային տեսանկյունից, որպեսզի պահպանվի կիրառվող օրենքի և դրանով հետապնդվող նպատակի միջև անհրաժեշտ հարաբերակցությունը:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, Հանձնաժողովը գտնում է, որ Եղիազար Վարդանյանի կողմից կատարված խախտումը հանրային վտանգավորության տեսակետից ունի նվազ նշանակություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Եղիազար Վահրամի Վարդանյանին ազատել վարչական պատասխանատվությունից՝ հայտարարելով բանավոր դիտողություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Եղիազար Վահրամի Վարդանյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:
3. Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Եղիազար Վահրամի Վարդանյանին տրամադրել եռօրյա ժամկետ՝ «Պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղում կատարելու համար:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ